# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2025թ. թիվ 744-Ա

## ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 6-ի N 1575-Ն որոշման Հավելված 9-ով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ և 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթներով՝

Ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի թվով 8 մանկապարտեզների համար էլեկտրական սալօջախների ձեռքբերումն իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնման ձևով: Գնման ընթացակարգի հրավերը տրամադրել միայն գնման հայտում նշված անձանց (հնարավոր մասնակիցներին):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-11-19 12:16:12 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր